

Նմանապէս պէտք էր որ արդար վաստակոց արդիւնք լինէր զենեալը, եւ ոչ թէ յափշտակութեան կամ զողութեան կամ զրպարտութեան կամ վաշխի, կամ բռնի գնուած կամ տառապեալները զրկելով. զի բոլոր ասոնք «պիղծ» կը համարուէին Աստուծոյ առջեւ (Մանդ. 58): Ալաւկայ որդին կը պատուիրէ՝ որ երբ այսպիսի նուէրներն իմացուին, բացօթեայ ձգուին՝ որպէս զի շներն ուտեն (1,10):

Սոյն վարդապետս կը զգացնէ նաեւ ապօրինութիւնն «անսուրբ կենդանեաց» զենման. այս ինքն է այն որ «զոհեալ է կամ հեղձուցիկ» (անդ), եւ կամ ուրիշ անարժան եղանակաւ պղծուած (2,10): Մերժելի են ըստ Տաթեւացւոյն՝ մեռեալը, ըստ պանեալը կամ գազանաբեկն ալ, ըստ ուրում անոնց արիւնը մարմնոյն մէջ մնացած է: Գազանաբեկի անյարմարութիւնը կը յիշէ եւ Մխ. Գոշ (Առկ. 100): Տաթեւացին նոյն կարգին կը զնէ ծովայիններն ալ, ըստ որում անարիւն են (Հրց. 366): Բայց եթէ նկատենք՝ որ ցամաքային վայրենի անասունք եւս զոհելի կամ զենլի չէին ոչ Հրէից եւ ոչ մեր քով, կը հարկադրինք նիւթականէն աւելի բարոյական պատճառ մ'որոնել ազոր մէջ. այս ինքն՝ թէ ասոնք մարդուն սեպհական կամ քր-